

Ծ Ա Ն Օ Թ Ո Ւ Թ Ի Ի Ն

Հանդէս Ամսօրեայի 21 ամեայն, սկսեալ
1887—1907:

Քանի մը ամիս ետքը Հանդէս Ամ-
սօրեայն կը բոլորէ իւր 20 ամեալ շրջանը,
եւ կը սկսի 21 երրորդ տարեդարձը:

Հանդէս Ամսօրեայն իւր նպատակին
հաւատարիմ մնալով, ըստ պիտոյից եւ
պարագայից ժամանակին ջանաց իւր
էջերն նուիրել գիտնական եւ քարոյական-
կրօնական գրութեանց յօգուտ մեր Հայ
ազգին եւ ի յազուրդ սուսմաստենչ ազ-
գասիրաց: Բնական էր՝ որ Հանդէսն յա-
ռաջադիմէր, ունենալով իբրեւ իւր հիմնիչն
ու առաջին դաստիարակը գնդակաւոր
անձն Գերապայծառ Ալտրնեսանի: Հան-
դէս Ամսօրեայն մտադիր է իւր առոյգ
հասակին մէջ չինայել աշխատութեան,
եւ իւրովսանն օգնել մեր Հայ ազգին
բոլորական գիտնական վիճակին բար-
ւոքման, ի լոյս ընծայելով պէսպէս կարեւոր
գրութիւններ: Ստոյգ է, թէ ազգասէր
քաժանորդք իրենց հանգանակութեամբ
քաջալերեցին ցա՛յսօր մեր ձեռնարկու-
թիւնն, որուն համար հրապարակաւ կը
ոմատուցանենք մեր շնորհակալութիւնը
Իւրաքանչիւր ոք քա՛յ գիտէ, թէ աննիւթ
մոռառարական գրական արգասիք մը
յառաջ բերելն ու զայն քարտիսի վրայ
պատկերացընելը կը կարօտի միութեան
միջոցներու:

Քսան տարի յառաջ Հանդէս Ամ-
սօրեայն հրատարակած էինք միաթերթ,
եւ զինն էր Փրանք 8.—. քիչ մը վերջ
միաթերթ Հանդէսն վերածեցինք երկու
թերթի եւ զինն էր Ֆր. 10.—. միայն թէ
նոյն ժամանակ գրաշարներուն օրական

վարձն էր հիմնականին գրեթէ կես
գինը: Ընթերցասէր հասարակութիւնն
մտադիր կ'ընենք, թէ անցեալ տարի
Վիեննայի բոլոր տպարաններն ստիպուե-
ցան զիջանիլ իրենց գործաւորաց խիստ
պահանջմանց, որով տպարանի գործա-
ւորաց վարձքը գրեթէ կրկնապատ-
կեցաւ: Յանկալի է մեզի՝ Հանդէս Ամ-
սօրեայի ծաւալը նոյն պահել. քայց
որպէս զի Հանդէսն իւր ազգօգուտ
ընթացքը շարունակել կարենայ՝ առանց
դրամական մեծ վնաս կրելու, հարկ
անհրաժեշտ համարեցանք փոփոխութիւն
մ'ընել գնոյն մէջ. եւ այն՝ վերջին տա-
րիներս մեր կրած վնասին վրայ՝ մոյ
մեծ վնաս մը չառնելընելու աղաչարացի
պատճառաւ: Կը յայտարարենք ուրեմն,
թէ 1907էն սկսեալ՝ մեր Հանդէս Ամ-
սօրեային զինն է Փրանք 15 = Ռուպլի 6:

ԲՈՎԱՆԳԱՎՈՐՈՒԹԻՒՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿՆ

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ — Արքայաժ. եւ Հայկ. 33: —
Նոյնէ, քննական ուսումնասիրութիւն. 36: —
Ցուցակ ձեռագրաց Թարգմ. 39: — Միւթաք
Գօշի Դատաստանագիրքը եւ Հայոց հին քա-
ղաքացիական իրաւունքը. 42:

ԿԵՆՍԵՐԱԿԱՆ — Մարգիս արքեպ. Սառաֆեան.
47:

ԱՇԽԱՆԱԳՐԱԿԱՆ — Հին Հայոց տեղւոյ անուն-
ները. 54: — Արաքացի մատենագրութիւն Հայաս-
տանի մասին. 60:

ՊԱՏՄԱԿԱՆ — Մայայտ վկայ մը. Գաբրիէլ Նահա-
տակ. 61:

ԵՃԵԼՆԵՐ

Նամակը խմբագրութեան. 62:
Ժամօթութիւն. 64:

ՀՐԱՏԱՐԱՐՈՒՄ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ԽՈՐԱԿՈՐ

Է. ԱՌԱՔԱՆԵՐ Կ. ՊԱՐՈՆՅ

ՎԵՆԵՆԱ. ՄԻԻԹՈՐԻԱՆ ՏԳԱՐԱՆ